«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 12
06.07.2022թ.

1. ՀԱԱՀ Ամբիոնի կանոնակարգի 4-րդ կետի դրույթների քննարկման (ի հայտ եկած խնդիրները և փոփոխելու նպատակահարմարությունը) վերաբերյալ.

ՀԱԱՀ Ամբիոնի կանոնակարգի 4-րդ կետի դրույթները խմբագրել հետևյալ ձևակերպմամբ.

Ամբիոն ձևավորել առնվազն գումարային 6 դրույքին համարժեք ժամային ծանրաբեռնվածության և ամբիոնի վարիչից բացի ամբիոնում առնվազն 2 լրիվ դրույքով աշխատող մասնագետ դասախոսների առկայության դեպքում, ովքեր ունեն գիտական աստիճան և / կամ կոչում:

2. Երիտասարդ աշխատակիցների և դասախոսների առաջխաղացման վիճակի և բարելավման հնարավորությունների վերաբերյալ.

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հանձնարարել ստորաբաժանումների ղեկավարներին.

- լինել հետևողական և վերապատրաստման տարբեր ծրագրերով արտերկիր մեկնող դասախոսների վերադարձից հետո երկու շաբաթյա ժամկետում կազմակերպել միջամբիոնային, ներֆակուլտետային զեկուցումներ,
- ամբիոնի ծանրաբեռնվածության կազմման և ժամերի բաշխման ժամանակ առաջնորդվել գնահատման հստակ և օբյեկտիվ չափանիշներով, գործել թափանցիկ՝ նախապատվությունը տալով առավել մեծածավալ աշխատանք կատարածներին,
- պաշտոնի փոփոխություն ակնկալող աշխատակիցներին գնահատել ըստ սահմանված չափանիշների, օբյեկտիվ ձևով և առավել արժանիների վերաբերյալ ներկայացնել առաջարկություն:

2.3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին, միջազգային կապերի և կրթական բարեփոխումների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանին և իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին մինչև 2022-2023 ուս. տարվա մեկնարկն ավարտել ու գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ատեսավորման կարգը:

3. Համալսարանի որոշ ստորաբաժանումների ուսանողների ավարտական աշխատանքներում տեղ գտած գրագողության վերաբերյալ.

3.1. Ընդունել ի գիտություն:

3.2. Հանձնարարել աշխատակազմի ղեկավար Լ. Մնացականյանին ագրարային ճարտարագիտության ֆակուլտետում արձանագրված ավարտական

աշխատանքների գրագողության հարցը քննարկել էթիկայի հանձնաժողովի նիստում, իսկ աշխատանքների ղեկավարներին ու ամբիոնի վարիչին ենթարկել պատասխանատվության:

3.3. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին խստորեն վերահսկել 2022-2023 ուս տարվա ավարտական աշխատանքների կատարման որակը և սահմանել աշխատանքների ներկայացման հստակ ժամկետներ:

3.4. Հանձնարարել իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին մշակել ու գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել համալսարանում գրագողության դեմ պայքարի և ակադեմիական ազնվության հստակ քաղաքականություն:

4. Համալսարանի հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի կանոնադրության և տնօրենի ընտրության կարգի հաստատման վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց.

-ՀԱԱՀ հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի կանոնադրությունը,

-ՀԱԱՀ հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի տնօրենի ընտրության կարգը:

5. Համալսարանի միջին մասնագիտական կրթության դուալ ուսուցմամբ ուսումնական պլանների հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

5.1. Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 0721.05.01.5 «Տեխնոլոգ՝ պահածոների և սննդախտանյութերի» որակավորմամբ մասնագետի պատրաստման 0721.05.5 «Պահածոների և սննդախտանյութերի տեխնոլոգիա» մասնագիտության ուսումնական պլանը:

5.2. Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 0811.03.01.5 «Տեխնիկ-ագրոնոմ» որակավորմամբ մասնագետի պատրաստման 0811.03.5 «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտության դուալ կրթական ծրագրերի ուսումնական պլանը:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ